

Տ Ե Տ Ե Ս

ՀԱՅՈՂԻՍ Ա.Մ.Ս.Ե.Ս.Յ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԲԱԺԻՆՆԵՐՈՒ ԳՆՈՑ ՅԱՒԵԼՈՒՄ

Ժողովրդեան կողմանէ Տնտեսական Միութեան համար ցոյց տրուած խանողը չի մարելու նպատակաւ Միութեան Տնօրէն Ժողովը՝ ինչպէս որ Ընդհ. Ժողովոյ հաւանութիւնն ստացած էր, որոշեց բանալ երկրորդ 300 բաժիններու բաժնորդագրութիւնը, պայմանաւ սակայն որ վաճառում ըլլայ միայն մինչեւ իրատէի ստացման թուականը և այն ատեն մնացած բաժիններն՝ առանց այլ եւս հիմնադրական բաժիններու զօրութիւնն ունենալու, վաճառուին բարորովին տարբեր պայմաններով և զնողներն պարզ անդամ նկատուին հիմնադրի անդամոց առաւելութիւններէն զորիկ. ուստի յիշեալ բաժիններն երեք կարգի վերածուելով զնոց վրայ յաւելադրութիւն եղած է նետեւեալ կերպիւ.

Դ. Կարգ, 200 բաժին, 200 զրուշ աւելադրութեամբ

Ե. » 200 » 400 » »

Զ. » 400 » 600 » »

Այս աւելադրութեան շահը՝ նախկին յայտաբարութեանց տրամադրութեամբ, պիտի վերաբերի նախկին 300 բաժնետէրերուն :

Ինչպէս որ յաջորդ էջերու մէջ նոր արձանագրուած ան-

դամոց ցանկէն կը տեսնուի, այս նոր պայմաններով շատ կարեւոր անձինք կը շարունակեն հիմնադիր բաժանորդ գրուիլ Միութեան, քանզի՝ յաւելադրութեամբն հանդերձ, վճարուած դրամը՝ որ չորրորդ կարգին մէջ մէկ կանգուն գետնի հազի 37 $\frac{1}{2}$ փարայ կուզայ, խիստ աննշան բան մ'է, համեմատութեամբ զործոյն կարեւորութեան եւ տեղերուն ստանալիք սպազայ արժէքին, որոյ իրականացման բնաւ տարակուսելու պատճառ մը չի կայ, եւ սա ևս պէտք է զիտնալ թէ՝ Միութեան զնելիք տեղերուն մօս՝ եթէ մէկը այսօր ուրիշ տեղ մը զնել ուզէ, թող թէ նոյն յատկութիւններն ունեցող տեղ բնաւ չիկայ, եղածն ալ կրկնապատիկ զնով անկարելի է ստանալ, և ներկայ տեղերս ալ Միութեան շնորհիւ է միայն որ այս պայմաններով կստացուի:

Յ Ո Ր Դ Ո Ր Ա Կ Բ

Ամբողջ մարդկային կեանքն է մի մատեան
Ուր կ'ապացուցուի լաւ թէ՝ յաւիտեան
Յարատեւ ջանքն է ամէն ծանրութեան
Լըծակը :

Երբ չը գործածես իւղ անոււահոս,
Եւ չերկարես ձեռքդ ամէն ծաղկի մօս,
Զը խայրեր բզիեզ այն լիրք անամօր
Պիծակը :

Երբ զիտնաս ծերոց խօսքն ու խրան յարգել,
Վեր բռնել պատիդ իբրեւ շանրարգել,
Կրնաս բնկնել չար բաղդին ան-արգել
Կայծակը :

Երբ դու կըրիցդ ու խօսիդ չես Տէր.
Անկեղծ քարեկամ չունիս, կեղծ՝ շատեր,
Շնուս, զնա մըտիր, եղբայր, չեմ զիտեր
Ո՛ր ծակը . . . :

ԱՆԵՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Ըստ թէ ինչ գիւրութիւններ կընծայէ փոխանակագիրն
մէկ տեղէ ուրիշ տեղ մը դրամ զրկելու գործողութեան մէջ։
Բայց ենթագրեցի միայն թէ դրամ զրկողը՝ արժէթուղթը
ոչ թէ իւր՝ այլ իւր պահանջամիտոջը հրամանին շինել տուած
է։ Այժմ պարտիմ յաւելուլ թէ այս եղանակը շատ մեծ կա-
րեւորութիւն մ'ունի, քանզի դրամ զրկողը այս կերպով որ
եւ իցէ դատական պահանջումներէ զերծ կը մնայ։ Իրաւա-
գէտք՝ կանուանեն զայն այս պարագային հայրայրող, արձե-
սու (remettant, donneur de valeur)։ Բայց առկից զատ ուրիշ
շատ մը եղանակներով կրնայ փոխանակիր շինուիլ։ Այդ եղա-
նակներն ոլիսի քննեմ ի ժամանակին։ Բայց տեսնեմք նախ
օրինական պայմաններն։

Օսմաննեան օրինաց կարեւորագոյն յօդուածն է այս մատ-
ոին 7դն, որ յար եւ նման թարգմանութիւնն է ֆրանսական
օրինագրին 110^{րդ} յօդուածոյն։ Ցաւալի է որ յարմար դատ-
ուած չ'է մի քանի փոքրիկ յաւելուածներ ընել եւ մանա-
ւանդ բարեփոխել պայմանաց եւ յիշատակութեանց թուար-
կութեան եղանակն, նոյնպէս ջնջել երբեմն յիշատակութեանց
պէտքն որք չ'ունենալով ո՛ եւ է կարեւորութիւն ձրի անվա-
ւերութեան եւ դժուարութեանց տեղի կըտան։ Բայց ոլէտք
է ընդունիլ օրէնքն որպէս է։

Ահաւասիկ սոյն յօդուածը մի քիչ փոփոխեալ մի քանի
պիտանի յաւելուածներով։

«Փոխանակագիրն կը քաշուի մի հրամարակէ ի միւսն։

Պէտք է արարունակէ անպատճառ Ա. Քաշողին ստորագ-
րութիւնն Բ. վճարողին անունն եւ յայտարարէ, Գ. երրորդի
մը կամ քաշողին հրամանն, Դ. վճարելի գումարն, Ե. փո-
խարէնին դրամով, ապրանքով, ի հաշիւ եւ կամ ուրիշ կեր-
պիւ ըլլան։ Զ. վճարման տեղին եւ է. պայմանաժամն, Բ.
Ստեղծման տեղին եւ Թ. թուականն։ Եւ երբեմն Ժ. Ա-
ռանց մասնաւոր ազդարարութեան կամ զա ազդարարութեան,
Ժ.Ա. Առանց ծախի վերադարձ, Ժ.Բ. Առանց երաշխաւորե-

լու, պայմաններն, մ.թ. քանի օրինակ գտնուիլն եւ արժէ-
թըլթին քանիերորդ ըլլալն :

Ստորագծեալ մասերն կը ցուցնեն բուն յօդուածոյն վրայ
ըրած յաւելումներս : Մնացեալ մասերն աւելի կանոնաւոր
կարգաւ տեղափոխուած են :

Ինչպէս կերեւի առաջին ինն պայմաններն անսպատճառ
պէտք է կատարուին : Միւս չորսը կրնան գտնուիլ կամ չը
գտնուիլ առանց փոխանակագրոյն վաւերականութեանը վնա-
սելու :

Ընդհանուր կանոն է որ փոխանակագիրը մէկ հրապա-
կէն ի միւսն կը քաշուի . այսինքն թէ ստեղծման եւ վճար-
ման կամ այսպէս ըսեմ քաշողին եւ վճարողին հրապարակ-
ներն անհրաժեշտ պէտք է տարբեր լինին : Առանց ագոր
փոխանակագիր չը կրնար ըլլալ, որպէս ետեւ ի սկզբան փո-
խանակագրոյ գլխաւոր դերն եղած է մէկ տեղէ ի միւսն
դրամի գումարներ փոխանցել:

Այս կանոնն, այլ եւ այլ պատճառներու համար զար-
գանց կառնում այս համառօտ տեսութեանս մէջ յիշելու,
այժմ չափազանց կը նկատուի իրաւամբ, որովհետեւ մասնա-
ւորապէս՝ փոխանակագրոյն մեծագոյն կարեւորութիւնը փո-
խանակութեան դաշինք մը գործադրել չ' այլ յաւէտ իբր
դրամ գործածուիլն :

Ա. • Քաշողին ստորագրութիւնն : — Թէեւ օրէնքն այս մասին
ոչինչ կըսէ, բայց այս պայմանն բնականաբար պէտք է գոր-
ծադրել : Առանց ստորագրութեան թուղթ մը պարզ ծրա-
գիր մ'է : Ֆրանսակի մէջ այս կէտի վրայ տարակոյս չկայ :
Հին հեղինակներն կը պնդեն որ միշտ այս պայմանն յար-
գուած է : Գերմանիայ մէջ, օրէնքն մասնաւորապէս կը յի-
շատակէ քաշողին ստորագրութեան պէտքն : Գալով Սնդդիլոյ
հոն օրէնքն կը տարբերի : կը բաւէ որ թղթոյն վրայ քաշո-
ղին անունն գրուած ըլլայ իւր՝ կամ փոխանորդի մը ձեռամբ .
բայց եւ այնպէս ծ ոսկիէ վար արժէք ունեցող փոխանակա-
գիր մը պէտք է ստորագրուած ըլլայ թէ քաշողէ մը եւ թէ
ուրիշ վկայէ մը :

Բ. • Վճարողին անունն : — Արդէն ըսած ենք թէ երեք

տարբեր անձանց գործակցութեամբը միայն փոխանակագիր մը յերեւան կրնայ գալ: Վճարողը եւ քաշողը ուրեմն զանագան անհատներ են անպատճառ:

«Այս ինչ գումարը պիտի վճարեմ այս ինչի հրամանին» այս կերպով գրուած թուղթ մը փոխանակագրոյ ամեն պայմաններն լրացուցած իսկ ըլլայ իւր փոխանակագիր չը կրնար նկատուի:

Սեղանաւոր մը ուրեմն չը կրնար իւր գործակատարին վրայ փոխանակագիր մը քաշել, ինչպէս դրամատուն մը չը կրնար քաշել իւր մի մասնաճիւղին վրայ: Քանզի ինքն իրեն վրայ քաշած կ'ըլլայ: Նոյնակս վաճառական մը չը կրնար իւր ընկերոջը այդպիսի հրաման մ'ընել փոխանակագրով եթէ այդ ընկերն եւ ինք ի միասին օրինական անձնականութիւն (personalité juridique) մը կը ներկայացնեն:

Առանց ասոր արժէ թուղթը տեսակ մը պարտասնուրհակ կըլլայ. քանի որ միշտ միեւնոյն քաշողն է որ վճարումն պիտի կատարէ տարբեր տեղ մը, եթէ ոչ ինքն անձամբ գէթ իւր հրամանին ներքեւ գտնուող անձի մը միջոցաւ եւ ըստ իւր հրամանին: Փոխանակագրոյն ընդունելութեանը եւ փոխարժէքի (provisioն) կարեւոր խնդիրներն այլ եւս տեղի չեն ունենար եթէ վճարողը եւ քաշողը տարբեր անձեր չեն:

Գ. Երրորդի մը կամ քաշողին հրամանն: — Օրինաց այս տրամադրութիւնն ցոյց կը տայ այն փափաքն ըստ որում փոխանակագիրն պէտք է ըլլայ անպատճառ շրջաբերութեան թուղթ մը: Այս շրջաբերութիւնն կը կատարուի փոխանցութեամբ (endossement): Որով եթէ փոխանակագրոյն վրայ գրուած ըլլայ «վճարէ Յովհաննէսին» այդ թուղթն թէեւ վաւերական բայց փոխանակագիր չըլլար: Պէտք է որ գըրռուած ըլլար «վճարէ Յովհաննէսի հրամանին»:

Եթէ քաշողին հրամանին գրուած է, փոխանակագիր չը կրնար անուանուիլ քանզի երկու անձի միջեւ տեղի ունեցած պարզ յանձնարարութիւն (mandat) մ'է: Բայց այդ թուղթն փոխանակագիր կ'ըլլայ երբ փոխանցուի երրորդի մը հրամանին: Միայն թէ այդ երրորդն եւ վճարողը պէտք է տարբեր հրապարակներու վրայ բնակավայր ունենան, եթէ ոչ

փոխանակագիրը մի հրապարակէ ի միւսն քաշուած չ'ըլլար։ Այս բաւական շփոթ դրութիւնն ինչպէս Տաճկաստանի նոյնպէս Ֆրանսաի եւ Խոալիոյ մէջ ընդունուած է։ բայց Գերմանիոյ մէջ բոլորովին հակառակն կը տրամադրէ օրէնքն։

Դ. Վճարելի գումարն։ — Փոխանակագրոյ մը առաջարկայն միայն վճարելի գումար մը կրնայ ըլլալ եւ սորա տեղ ուրիշ ու եւ է պարտականութիւն (obligation) չը կրնար դրուիլ։ Առկից զատ պէտք է գումարին որպանութիւնն ըսուած ըլլայ։ Անլաւեր է ուրեմն այն փոխանակագիրը որոյ մէջ ըսուած է «Վճարէ խոստացած գումարդ» եւ կամ «Վճարէ պարտական եղած գումարդ»։ Սովորաբար գրոյն վերեւը գումարն կը գրուի թուանշանով եւ սպարբերութեան մէջ գրով, ինչպէս կերեւի օրինակին մէջ։ Սխալմանց եւ խարդախութեանց տեղի չը տալու համար Խոտալցիք ընդունած են որ անպատճառ եւ միշտ գրով նշանակուի գումարն։ Բայց այս դրութիւնն մերժուած է Ֆրանսաի մէջ, ինչպէս Պելճիոյ եւ Գերմանիոյ մէջ։

Ուրեմն եթէ միայն թուանշանով գրուած է գումարն, փոխանակագիրն վատերական կը մնայ. բայց եթէ թէ թուանշանով եւ թէ գրով գրուած է, միայն գրով գրուածն նկատողութեան կ'առնուի, եթէ սա եւ թուանշաններն տարբեր գումարներ կը ցուցնեն։

Ե. Փոխարէնին գրամով, ապրանքով, ի հաշիւ կամ ուրիշ կերպիւ ըլլալն։ — Երբ անձ մը փոխանակագիր մը շնորհ կը տայ սեղանաւորի մը, յայտնի է թէ այդ արժէթուղթն չընդունած նորա գնոյն փոխարէնը վճարելու կ'ստիպուի։ Այդ փոխարէնն շատ կերպերով կրնայ տրուիլ։ Նախ դրամով, յետոյ ապրանքով նոյնպէս նաեւ կրնայ իւր հաշոյն անցնել տալ, եւն։ Արդ այս փոխարէնն ոչ թէ միայն պէտք է վճարուած ըլլայ քաշողին, այլ նաեւ պէտք է որ անպատճառ վըճարումն նախ զրուցուած ըլլայ թղթին մէջ եւ երկրորդ ցուցուած ըլլայ ինչ կերպիւ (դրամով թէ վաճառքով եւն) եղած ըլլալն։

Այս պայմանն ոչ կարեւորութիւն մ'ունի ոչ օգուտ մը. բայց մեր օրէնքին մէջ անպատճառ կը պահանջուի։ Կը կարծուի թէ փոխատուութիւն մը փոխանակագրոյ ձեւին տակ

Հաքողելու, նոյնպէս քաշողն այլ եւ այլ վտանգներու չ'ենթարկելու ինչպէս նաեւ մնանկութեան ժամանակ այլ եւ այլ վտանգներէ զերծ պահելու միակ միջոց է սա:

Կարելի չ'է զայս ընդունիլ քանզի փոխարէնն ընկալայ գրելու տեղատ դիւրին է փոխարէնն ընկալայ ի հաշիւ եւն գրել:

Զ. Վճարման տեղին պէտք է ծանօթ ըլլայ կրողին, որպէս զի կարենայ պայմանաժամին դիմել որու որ անկ է, եւ որպէս զի եթէ վճարումը մերժուի՝ կարենայ օրինական պարտականութիւններն եւ իրաւունքն լիսաբար կատարել:

Է. Պայմանաժամ: — Վճարման ժամանակն պէտք է ակներեւ նշանակեալ ըլլայ: Ո՞ եւ է պայման կամ անորոշ պայմանաժամ փոխանակագրոյն անվառերութեանը տեղի կը տան: Կը բաւէ սակայն որ որոշ եւ հաստատ կերպով մը վճարման ժամանակն յայտնուած ըլլայ: Օրինակ, քուականէս այսիան օր յետոյ, ի ներկայացման եւն եւն.

Ը. Ստեղծման տեղին: — Թէ եւ օրէնքն մեր յօդուածոյն մէջ այս մասին բան մ'ըսած չ'է, բայց պէտք է անպատճառ այդ պայմանն կատարել: Փոխանակագիր մը այնպէս պէտք է շինուած ըլլայ որ զայն գնողն ո՞ եւ է տարակոյս չ'ունենայ իւր վառերականութեանը մասին: Զրուցեցի արդէն թէ ստեղծման եւ վճարման տեղերն տարբեր ըլլալ հարկ է, արդ գնողն ինչպէս կարողէ գիտնալ զայս, երբ ստեղծման տեղին որոշակի գրուած չ'է: Թող որ խել մը դժուարութեանց կրնայ հանդողիւ եթէ այդ պայմանին յարգուած ըլլալուն ապացոյցն տալու ելնէ:

Թ. Թուական: — Թուականն որ ամեն գրութեանց մէջ ամենակարեւոր պայման մը չ'է, փոխանակագրոյ մը հստար անհրաժեշտ է: Շատ պարագայներու մէջ թուականը պէտք կ'ըլլայ: Օրինակի համար երբ վճարման ժամանակը թուականէն այսչափ օր կամ ամիս վերջն է: Սակայն եթէ որոշեալ օր մ'իսկ ըլլայ վճարաժամը, օգտակար կրնայ ըլլալ թուականն, ցուցնելու հստար թէ ճշմարտիւ մէկ տեղէ ի միւսն քաշուած է փոխանակագրոյն թուականին քաշողն վճարատեղիէն պարբեր տեղ մը կը գտնուէր:

Փոխանակագիրը կը պարունակէ երբեմն հետեւեալ յիշտապակութիւններն .

Ժ. Առանց մասնաւոր ազդարարութեան կամ ըստ ազդարարութեան պայմաններն : — Ըստ առաջին պայմանին վճարողը կոտիպուի սպասելու որ մասնաւոր նամակաւ մը քաշողը իրեն ազդարարէ թէ պէտք է վճարէ : Իսկ երկրորդ վիշտակութեամբ կը ցուցուի թէ առանց ու եւ է ազդարարութեան սպասելու՝ վճարողը պէտք է անմիջապէս գործադրէ փոխանակագրոյն պայմանն : Այս պայմաններուն, առաջինն՝ կարեւոր է այլ եւ այլ պարագաներու մէջ եւ մասնաւորապէս խմացնելովն վճարողին թէ ի՞նչ գումար պէտք է պահէ իւր արամադրութեան ներքեւ եւ երբ եւն . եւն :

ԺԱ. Առանց ծախի վերադարձ : — Այսինքն երբ արժէ թուղթն չճարուի, փոխանակ բողոքելու եւ այլ եւ այլ ծախուց տեղի տալու, կրողը կրնայ անմիջապէս դիմել երաշխաւորներուն եւ անոնցմէ խնդրել փոխանակագրոյն վճարումն :

Այս եղանակն չատ պարագայներու մէջ օգտակար է մասնաւանդ երբ փոխանակագրոյն գումարը վաքր է եւ կամ երբ քաշողն տարակայս ունի վճարողին վարկի մասին :

ԺԲ. Առանց երաշխաւորելու պայմանն — կը ծառայէ անպարտ ձգելու քաշողն եթէ սա ժամանակին յզած է վճարողին փոխարժէքն, նոյն խակ եթէ կրողը պէտք եղածին պէս փութաջան գտնուած է ժամանակին : Կրողն այս պայմանով սափուած կը մնայ միայն վճարողին գիմելու :

ԺԳ. Քանի օրինակ զժույղն եւ արձերդին յանիերորդ շլայն : — Կարեւոր է քանի մը օրինակներ շինել միեւնոյն փոխանակագրէն, քանզի մին երբ կորսուի, այն ժամանակի միւս օրինակն աղոր տեղն կը բռնէ : Նոյնպէս կարեւոր է որ մի քանի օրինակ ըլլայ փոխանակագիրն եթէ քաշողին հրամանին գրուած է նա, որպէս զի մինչ անոնցմէ մին յընդունելութիւն զրկուած է վճարողին՝ միւսն կարելի ըլլայ ծախել ի հարկին :

Այս օրինակաց մի քանի հատ ըլլան թէ եւ կոմայական է, սակայն երբ չատ օրինակներ կան՝ անսպատճառ պէտք է

ըստ օրինի որ ամենուն վրայ առանձինն գրուած ըլլոյ քանիերորդ ըլլալն, որպէս զի մի եւ նոյն փոխանակագիրն մէկ անգամէ աւելի չը վճարուի:

Ասոնք են ահա օրինաց այլ եւ այլ տրամադրութեանցը բացարութիւններն: Կան նաև ուրիշ անձինք որք աւելի կամ նուազ կարեւոր դերեր կունենան փոխանակագրոց մէջ: Աղոնց մասին ուրիշ առթիւ պիտի խօսիմ:

Ե. ՇՆՈՐՀՔԵԱՆ

ՎՐԻԹԱԿ

Նախորդ (Փոխանակագիր) վերնագրով յաղուածոյս մէջ ընկեր բառերը պէտք է որբագրուին այսպէս՝ լիկեր (confrère):

Ե. Շ.

ՊԱՏԱՍԽԱՆ ՊԻՏԱՆԻ ՀԱՐՑՄԱՆՅ

Համեստավայր Տիկին Մ. Եսայեան

Սամաթիս

Օգտակար Տնտեսի Փետ. թուով հրատարակած նամակդուչադրութեամբ կարդացի. ուրախ եմ որ այս առթիւ տեղեկացայ թէ Տնտեսի նման ամեն նկատմամբ ազգօգուտ հանդէս մը, կանանց դասէն ալ ոչ միայն ընթերցողներ, այլ եւ աշխատակիցներ ունի. ասի թէ Տնտեսին եւ թէ մեր Հայ Տիկնանց պատիւ մ'է. շարունակենք այսպէս աշխատիլ:

Գալով «կարի մեքենայի» վերաբերեալ խորհրդածութիւններու, կ'ընդունիմ եւ Զեղ հետ համակարծիք եմ, երբ ձեռքով գործելի մեքենայի համար միայն կ'ըսէք, զի այսօր տիեզերաբար ընդունուած եւ հաստատեալ է թէ ոսքով գործելի մեքենան, մանաւանդ իգական սեռի համար վատագաւոր եւ պատճառ է բազում հիւանդութեանց, ինչպէս են

1. Զպային շատ տեսակ հիւանդութիւնք

2. Անարիւնութիւն

5. Սըրաճու

4. Վէրէմ եւ այլն,

Զեմ ուզեր հրապարակ հանել թէ ի՞նչու համար ստքով գործելի կարի մեքենաները այսպիսի հիւանդութեանց առաջնորդ են։ Գուցէ օր մը իրար տեսնելու առիթն ունենանք, կարող եմ զջեզ համոզել։ Զի կան բաներ, որոց գաղտնիք մնան աւելի օգտակար է։

Ասի առիթ է ինձ, վսեմ։ Տօքթօր Սէրվիչն էֆէնտիի՝ դաստու եւ բարերարիս, մէկ խրաւը գրի առնել, ուրիշներու ալ օգտակար ծառայութիւն մը ըրած ըլլալու նպատակաւ։ «Երբ քսան եւ հինգ տարի առաջ, Օսմանեան արքունի րժշկական վարժարանը կաշակերտէի, դիսլուածով «կամաւոր գիջութեան» վերաբերեալ Գաղզ. գիրք մը ձեռքս անցաւ, մէկ քանի անգամ զանի կարդալով եւ սովորելով թէ այսպիսի սովորութիւն մը, անհամար երխոտասարդաց բազում տեսակ եւ մանաւանդ սըռածա, վէրէմ ըլլալուն պատճառ եղած է, է եւ պիտի ըլլայ, անմիջապէս զանի թարգմանելով, հրատարակել ուզեցի։ Եւ այն ժամանակները ոչ միայն տպարանները քիչ, այլ երեք չորս փոռմայէ, այսինքն 80-100 երեսէ բավկացեալ գործի մը տպագրական ծախքը խիստ սուզ էին։ Ես ըստու նէ, էսնափ իւթիւնի մը զաւակ, յետին տուիծան աղքատ ըլլալուն, եւ թարգմանած գործս հոչչակաւոր Միւհենախոեան տպարանը տանելով երբ որչափի ծախքի կարստ ըլլալը հասկնալ ուզեցի, տեսաց որ 3000 զրշ. պէտք էր, ախուր տուն գարցայ եւ գրութիւնը սպահեցի։ Բայց չտափանց փափաքս զիս հանգիստ չթողլով, տաղին անդին գացի, բարերար մը գտայ, եւ զիտանալով կանխաւ թէ այսպիսի գործ մը հրապարակ հանելը բաւական ծանր է, եւ մանաւանդ թարգմանութեանս մէջ սիստեմը չգտնուելու համար, վսեմ։ Տօք. Սէրվիչն էֆէնտիի դիմեցի եւ ձեռադիրս իրեն յանձնել ուզեցի։ տուանց կարդալու շատ գոհ եւ ուրախ եղաւ եւ գովեց զիս։ բայց ըստ այս մասին քեզ սա խրատը կուտամք. թէ

«Տղաս, փափաքդ եւ նորատակդ գովելի է, գու կուզես շատերու աղէկութիւն, բայց իմ կարծիքու է, այսպիսի հրա-

տարակութիւններն եթէ կարելի է արգիլել, որովհետեւ գիտցողը գիտէ, բայց այսպիսի գործեր կարդացուելով չգիտցողն ալ պիտի սովորի»։ ահա այս է կարծիքս, ալ բնշպէս կուզես այնպէս ըրէ։

Կրնայ երեւակայութէ, ինձի նման նոր ժամաքի տէր մէկը, որչափ կը կոտրի, բայց մտածելով որ զիս խրասողը փորձառու մէկն է, կամայ ակամայ մէկ կողմ դրի գործը, բայց միշտ սիրու կոտրած էր։

Տարիներ անցան, Փարիզ գացի, հոն ալ տեսայթէ մեր Սէրվիչն է Փէնտիֆի նման գիտնական բժշկաց կարծիքն ալ նոյնն է։

Զեռագիրս մինչեւ այսօր թանգարանս պահած եմ։ բայց բաղումք կարդացին, զի երբ երիտասարդ հիւանդ մը ունենամ, այն ախտին ենթակայ, նմա կուտամ կարդալու եւ կրկին կառնում։

Ահա միեւնոյն իրաւամբ չեմ ուզեր հրամարակ հանել, թէ ինչն համար ոտքով գործելի կարի Մաքինան, մանաւանդ կանանց դասին միշտ վուանգաւոր է։

Ա. Դիթինձնն

ԴԷՄՔԻ ՇՊԱՐՈՒՄ⁽¹⁾

Գարունը կուգայ, տաք է Սրեգակը, քիչ մը վերջն ալ ամսոն ու ամսոնաբիծեր (երեսի ցան), բան մը՝ զոր չեն սիրեր Եւայի աղջիկներն։ Ո՞րչափ շատ ազդեն Սրեւի ճառագայթներ, այնչափ շատ կ'ըլլան այս թուխու բիծերն, ու ո՞չ փոշին կ'արգիլէ անոնց անումը, ոչ ալ ուրիշ շպար մը։ Լաւ բանը այն է, որ Ամսոնաթթուով չփէ մէկն իր մորթը ուր որ երեւին ասոնք. Եթէ բոլորովին չկրնայ անհետել թթուն դէմքի այս ինքնեկ հիւրերը, գոնէ այնչափ բաց կ'ընէ զանոնք, որ չեն նշմարուիր։ Ամսոնաբիծերէն ազմատուելու ուրիշ միջոց մը այն է որ, նոր լուացումէն վերջ արեւի կամ օդի դէմք չելնէ մէկը։ Պէտք է ձեռք քաշէ վերջապէս ամեն մի օրիորդ իր դէմքի գունաւորումէն, որովհետեւ ամենականոնաւոր դէմքն ալ երթալով կը կորսնցնէ իր չնորհք ու

(1) Երեսը ներկել։

ձգողական ոյժն։ Բայց չլու որ վասիտուկ ու վայլուն ներկերով ալ հրապրում չեն ունենար նորէն գեղեցիկ դէմքերն ու շպարի տեսակներ ու իր խտիրը ունի արդէն ձաշակն։ Մէկը կը սիրէ, որ «կաթի ու արիւնի պէս» բլլայ մորթն, ուրիշ մը «երիթուն ու թուխիկ», երրորդ մը, «մոմի պէս ճերմակ ու թափանցիկ»։ Մորթը թարմ ու վայլուն պահելու համար պէտք է մէկդի ընել ամեն դեղ, փոշի եւ շպար, որք շուտով կը ծերացնեն դէմքն։ Ամենալաւ գեղադեղը յստակ ցուրտ ջուրն է, որ մնայուն թարմութիւն մը կուտայ դէմքին։

Զեռքի լուացի համար լաւ է տաք ջուրը. բայց դէմքի ու մարմինի միւս մասերու համար ցուրտ ջուրը միայն կարելի է գործածել, ջուր, այն որ մանուկ կ'ընէ նորէն մարդս ու մինչեւ ութուն տարին ալ թարմ ու գեղանի պահեց անուանի նինօն։

Յ. Մ. ՏՈՒՏՈՒՆԻՉԵԱՆ

ՊԻՏԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Սոյն վերնագրին տակ՝ տնտեսական, առեւտրական, դպրոցական, հնական, օրինական եւայլ պիտանի խնդրոց վերաբերեալ հարցումներ հանդիսիս մէջ հրատարակել որշած ըլլալով, յօժարութեամբ պիտ' ընդունիմք մեր բաժանորդաց կողմանէ մեզ ուղղուած այս տեսակ հարցումներն, ինչպէս եւ այդ հարցմանց տրուած պատասխաններն։ Հարցունք թէ պատասխանիք պէտք է համառօտ ըլլան եւ պարզ լիզուած գրուած։ Հրատարակութեան արժանի չը համարուած գրութիւնք եւ չեն դարձուիր։

22. Շաքարի հիւանդութիւնը ինչ բանէ յառաջ կուգայ, եւ բուժելի՞ է արդեօք։ Հիւանդի Մ. Տէր

23. Ուսանողաց հարիւրին 80ը կարձատեսութեան կենթարկուին։ Ինչ ընելու է զայն արդիւլելու կամ յետոյ զայն դարմանելու համար։ Լան է ակնոց գործածել թէ ոչ։ ՈՒՍԱՆՈՂ, Մ. Տէր. ԶԱՐ

24. Ոտից կոշաերը (նոսըր) անհետացնելու դիւրագոյն միջոցն ի՞նչ է։ Ա. Յ.

25. Երբ մէկը չարամտութեամբ հարցում մընէ քեզ, հարկ է պատասխանել։ Ա. Յ. Պ.

ՏՆՏԵՍԻ ԲԱՐԵԿԱՄՔ

Մեծաւ չնորհակալութեամբ կը յիշատակենք անուանքն հետեւեալ մարդասէր անձանց, որք նպաստած են Տնտեսի յառաջադիմութեան:

Խիւտավլէրտիեան Մաքսուտ էֆէնտի	
իյոստիկեան Յակոբ	»
Հէքիմեան Ալիքսան	»
Պեկեան Տօքթ. Յակոբ	»
Վարդանեան Յակոբ	»

Պարոնեան Ա. Ա. էֆէնտի

Այս վերջինն՝ որ միւսներուն հետ չը շփոթելու համար առանձինն գրած ենք. իւր բարենպատակ յանձնարարութիւններովն պատճառ եղած է որ

Ա. Երեք հագի կրկին մէկ բաժին արձանագրուեցան: Բ. Ա հոգի մասնաւորապէս հետաքրքրուելով եկան ընկեր գրուեցան (որոց անուանքն այսօրուան ցանկին մէջ) եւ

Գ. 7 անձինք ալ՝ որ արդէն ընկեր են, փափաք յայտնեցին նախկին բաժիններէն առնուլ՝ եթէ ձգող պատահի:

Վասնորոյ՝ առանց պէտք ունենալու յիշել իր յանձնարարութեանց շարժառիթը, եւ արդիւնքը միայն նկատողութեան առնելով, մեզ քաղաքավարական պարագ կը համարինք մեր չնորհակալութիւնը յայտնել:

Յ. Ա.

ՄՐՑԱՆԱԿ ՏՆՏԵՍԻ

Նիւթոց առաւելութեան, կարգին եւ յարմարութեանը պատճառաւ. Ա. Մ. Ալթունեան էֆէնտիի ԱՌՃՆԻՆ ԾԱԽՈՒՑ ԾՐԱԳԻՐԸ, որ սացած եմք եւ որ Տնտեսի մրցանակն վաստկած է, յաջորդ թուով պիտի հրատարակենք:

ՑՈՒՑԱԿ

Արեւելեան Տնտեսական Միութեան բաժանորդաց կողմանէ 1887 ապրիլ 12է մինչեւ մայիս 11 (Միութեան կազմակերպութեան Բ. տարւոյ 6^{րդ} շաբաթէն մինչեւ 9^{րդ} շաբթուան վերջը) տեղի ունեցած շաբաթական վճարմանց, որոց ընդհանուրն ինչպէս կը անսուի, եղած է 14220 դրա:

Թիւ անձի	Վ.հար. Դ.րւ.								
1	240	81	40	178	40	260	560	358	60
2	60	82	40	179	260	263	80	359	80
3	60	83	110	180	80	264	40	341	50
5	40	85	50	185	20	266	100	342	60
15	40	86	50	184	40	267	40	343	80
14	100	87	150	186	80	269	20	344	60
17	60	88	60	187	40	270	40	345	220
18	40	90	40	190	40	271	110	346	100
21	20	91	20	191	100	275	50	347	40
22	110	92	40	192	40	275	270	349	60
23	40	93	60	194	50	278	80	350	40
24	40	94	50	195	40	285	100	351	50
31	40	95	50	197	20	285	60	354	40
52	50	97	100	200	120	286	40	355	40
54	40	98	100	201	40	289	40	357	160
55	50	104	60	202	80	291	60	358	100
56	50	105	40	207	150	292	40	359	90
59	40	106	50	208	20	295	40	361	40
42	20	115	20	209	310	294	40	365	180
45	100	118	40	212	50	296	20	364	100
46	20	122	60	213	40	297	40	366	250
47	140	127	60	214	50	500	40	367	280
48	40	130	70	218	50	511	80	375	80
49	40	132	20	219	20	512	40	377	60
50	40	138	240	220	60	514	40	379	20
52	40	159	50	221	60	515	40	383	100
56	50	141	60	223	50	516	20	386	250
57	20	144	110	224	110	518	60	387	50
59	70	145	150	225	50	519	80	388	50
63	20	148	60	226	50	521	100	389	80
66	40	150	40	231	50	525	60	390	40
67	20	153	80	235	60	524	100	391	50
68	20	155	20	236	10	526	20	394	100
69	50	157	10	241	40	527	40	395	40
70	40	161	40	242	160	528	50	399	50
71	80	162	20	246	20	529	100	402	40
72	80	165	80	249	50	531	80	405	100
75	60	164	40	250	80	555	80	405	80
78	60	165	40	251	110	554	100	406	40
79	40	170	20	255	80	555	100	Դ.րւ.	14220
80	200	177	20	257	20	557	440		

Թիւ 3-4 ՏԱՏԵՍԻ վճարմանց ցանկին մէջ 319րդ թույյն սխալմամբ
20 դրւ. նուազ և 310րդին աւելի գրուած լինելուն այսու կուղղեմք:

ՅԱՀԵԼՈՒՄԾ

ԱՆԴԱՄՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՌՈՒԹԵԱՆ

Ա.Ճ.Ճ.Խ.ան	Տիգրան	Էֆէնտիլ	Տօքթէոռ, ակնաբայժ
Ա.Բ.Ա.Լ.ան	Յակոբ	»	Գրագիր հաշուակալ
Գ.արամաճեան	Խաչիկ	»	Մատէնձի
Զ.արդիփեան	Հովհանսիմի	Տիկին	
Թ.ապիտեան	Յովհաննէս	Պէյ	Տօքթէոռ
Խ.օրաստննեան	Միքայէլ	Էֆէնտիլ	Տօքթէոռ
Կ.իւլէսէրեան	Միհրան	»	Քէոսէլէճի
Հ.ամամճեան	Փեկիրոնէ	Տիկին	
Հ.է.օտիւկեան	Խաչիկ	Էֆէնտիլ	Երկաթագործ
Մ.անուէլեան	Յովակիմ	»	Բոլիցաձի
Մ.արգարեան	Ահարոն	»	Մենեկապետ
Մէրհամիթճեան	Յարութիւն	»	Եճզաճը
Մըրըրեան	Մարգիլո Յ.	»	Վաճառկն. Պանտըրմա
Մուհամմէտ	Իզզէթ	»	Միւհէնտ. Էվդաֆիլի պշ.
Մուստափա		»	Բաղար պաշը
Պարութճեան	Ղազարոս	»	Մաքինիստ
Պարութճեան	Մաքրիկ	Տիկին	
Պեկեան	Յակոբ	Էֆէնտիլ	Տօքթէոռ
Պերճեան	Աւետիս Յ.	»	Գործակասար
Պիանքի	Իլարիօ	»	Դեղագործ
Պօյաճեան	Ժիւսթին	օրիորդ	Դաստիարակուհի
Պօյաճեան	Միհրան	Էֆէնտիլ	Մաղաղաճի
Ռ.աֆայէլեան	Միմն	»	Տօքթէոռ
Սանճաքճեան	Մկրտիչ Ս.	»	Տօքթէոռ
Սթարք	Ճօն	»	Մեքենաբան
Տէրվիչեան	Մաքսուա Ճ.	»	Անթիգաճի
Տէր-Գրիգորեան	Յովհաննէս Յ.	»	Գրավաճառ
Փափազեան	Նշան	»	Քէոսէլէճի
Քիւրքճեան	Միհրան	»	Պաշտ. հեռգ. Սամսոն
Ֆախորի	Պէյ	»	Փոլս-Տնօրին հեռագր.

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա. Պ. Մ. Ա. Երիզա, Միութեան հիմական կանոնագորութիւնը կրկին հրատարակուելով զրկուեցաւ Տնտեսի բաժանորդաց. մօտերս հողային կանոնագրութիւնն ալ պիտի հրատարակուի. իսկ միութեան գործոց եւ նպատակին վրայ պէտք եղած տեղեկութիւններն պիտի կրնաք կարդալ հետզհետէ Տնտեսի մէջ:

Ա. Պ. Մ. Մարաշ, Տնտեսի նախակին թիւերը տալու պարտականութիւն չենք կրնար ստանձնել. եղածը միայն կուտանք. այս է մեր պայման. եթէ կուզէք թիւ 2է զառ միւսները կրնայ զրկուիլ. իսկ թիւ 2 կրկին տպուած ատեն:

Գ. Տ. Գ. Երիզա, Մենէ անկախ ինչ ինչ պատճառներով, Տնտեսներն մէկ քանի տեղ ուշ զրկուեցան թէեւ, բայց կը յուսանք թէ քիչ օրէն այդ պատճառներն ալ վերնալով առաքումներն կարգի կը մտնան:

Ա. Ա. Հ. Օրտու, Շնորհակալ ենք Զեր յոգնութեանցն համար ուզուած թերթերն զրկուեցան. վճարմանց մասին Զեր դիւրութեանց նայեցէք:

Ա. Մ. Ադրիանուսովլիս, Հաճի էլլուսի թերթերն զըրկուեցան:

Դ. Կ. Ա. Կեսարիս, 1 կանոնագրութիւն եւ 4 օրինակ Տնտես Դեկտեմբերէ սկսելով զրկուեցան Զեր հասցէին:

Յ. Պ. Փ. Զմիւռնիս, Վեցամսեայ բաժանորդագրութեան գինն ստացանք. անցեալ ամսէն սկսաւ Զեր թերթն պրկուիլ:

Թ. Յ. Շ. Պանտըրմա, Այդ կարգի ծանուցումներն կը նենք ձրիալէս. բայց մասնաւոր նամակագրութիւն չենք կրնար ստանձներ:

Կ. Ա. Խ. Տրապիզոն, Զեր ուզածին համեմատ երեքական օրինակ զրկուեցան. ինչպէս այլոց ալ ըսած եմք 2 թիւը սպառած է, որ կրկին տպագրութենէ յետոյ միայն կարելի է զրկել:

ԲՐԴԵՂԵՆՆԵՐԸ ԼՈՒԾԵՈՒ ԿԵՐՊ

Յարմար քանակութեամբ օճառի ջուր պատրաստէ . ջրոյ ամեն մէկ օխային մէկ ապուրի դրգալ ալիւր աւելցուր , գիր կրակին վրայ եւ անընդհատ խառնէ . ջուրն եռալուն պէս բրգեղնը թաթխէ եւ կրակէն վար առ . երբ ջրոյ տաքութիւնը ձեռքդ դիմանալու աստիճանին իջնէ՝ պարզապէս չիրի ըրէ եւ յետոյ լուա պարզ մաքուր ջրով : Եթէ լուալիքդ շատ աղոտ է կրկնէ սոյն գործողութիւնն :

Ա . Գ . Ա .

ԳՐԲԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼ ՄԻԶԱՏՆԵՐՈՒ ԴԵՄ

Առաջին միջոցն է լաւ խնամք տանիլ գրեանց , օդաւէտ պահարաններու մէջ պահել եւ չժողուու որ փոշի հաւաքուի անոնց վրայ : Ասկից զատ գրեանց շարքերուն ետին պէտք է գնել ասուի (չուլսա) կտոր մը զայն նախապէս թաթխելով բեւեկնի ոգի (թիրէ մէնթին ըուհու) , պինզին եւ կամ խաշած ծխախոտի ջրոյ մէջ : Այս միջոց կրնայ հեռացնել նաև մուկներն , որք նոյնալէս միաս կը հասցնեն գրեանց :

Ա . Գ . Ա .

ՓԱՅՑՏԸ ԿՐԾՈՂ ՈՐԴԵՐԸ ԶՆՁԵԼՈՒ ՄԻԶՈՅ

Մնախուկներու , սեղաններու եւ այլ փայտակերտ կահերու մէջ յաճախ կը գոյանան փաքրիկ կենդանիներ՝ որք տակաւ կը ծակծկեն փայտն՝ ամենանուրք փոշւոյ վերածելով զայն : Սոյն վասակար որդերէ աղատելու համար , պէտք է ի կիր առնուլ մին հետեւեալ միջոցներէ :

1° Որդերու կողմանէ բացուած ծակերէն ներս լեցնել բեւեկնի ոգիք , եւ մաքրել նաև անով՝ վնասուած կարասիքն ամբողջ .

2° Ծակերէն ներս լեցնել բեւդրօլ (կազ) նոյն եղանակաւ .

3° Փոքրիկ ապակեայ շիրինկայի մը միջոցաւ ծակերուն մէջ լեցնել՝ կէս քաշ ալքօլի (լաւ խալիրթօ) մէջ լուծուած մէկ տրամաժ-սիւլիւմնի հեղուկը :

Վերջին երկու դեղերն ալ պէտք է զգուշութեամբ կատարուին :

Ա . Գ . Ա .

ԿԱԹՆ ԵՐԿՈՐ ՃԱՌԱՆԱԿ ՊԱՀԵԼՈՒ ՄԻԶՈՅ

Ամառուան մէջ կարելի է երկար ժամանակ անայլայլ պահել կաթը՝ մէն մի քաշին մէկ կրամ ասիս-սորիի աւելցնելով։ Սայն թթուոյ ներկայութիւնն ոչ առողջութեան կը վնասու ոչ եւ ոչ ալ կաթին յատկութիւնները կը փոխէ։

Ա. Գ. Ա.

ՄԻԶԻՒՆՆԵՐԸ ԽՈՀԱՆՈՑՆԵՐԻ ՀԵՌԱՅՆԵԼՈՒ ՄԻԶՈՅ

Ինչպէս յայտնի է մրջիւնները ընդհանրապէս խոհանոցները եւ այլ ուտաելքք գտնուած տեղուանքը անհամար թուով կը յաճախեն, զանոնք հետացնելու համար քիչ մը բորսկ (կիւվէրչիլէ) վշրելով խառնէ ծեծած շաքարի հետ եւ դիրքանի մը օր ուր որ գտնուին մրջիւններն, որք կանհետանան եւ առնուազն երեք տարի չեն գտրի։

Լա Նարիս
Ա. Յ.

ԵԼԱԿԻ ԱՆՈՅՇ (ԶԻԼԷԿ ՐԵԶԵԼԻ)

Առ ելակի խոչըր եւ հասուն հասերը եւ հանէ կոթերը. ձիշգ ելակին չափ ալ շաքար կը է, երկուքը խնամքով իրար խառնէ եւ եփէ կաթսայի (թէնձիրէ) մէջ՝ երկաթ վատարանի վրայ, միշտ ուշադրութեամբ կաթսան թոթուէ, այսինքն վրփուրը բարձրանալուն պէս՝ որ շուտով տեղի կանենայ, կաթսան կրակէն վար առ եւ՝ երբ մէջինը հանդարափ եւ սլառուղներն երեւան, գարձեալ եփէ մինչեւ 40—50 վայրկեան, այնպէս որ ելակի գեղեցիկ գոյնը գեռ վրան ըլլայ, եւ ապա կաթսան գարձնելով ձգէ որ պաղի. յետոյ մաքուր ծծմբառ շիշերու մէջ լցուր եւ երկրորդ օրը բերանները լաւ մը գոյելով պահէ։

ՀԱՅԻՑ

ԹԻՏԱՆԻ ՀԱՐՑՄԱՆՑ ԱՐԴԻՒՆՔԸ

Վաեմ. Ամասեան էֆէնտինք՝ ինչպէս գործոյն կատարումը նոյնպէս եւ հետեւեալ նամակի հրատարակութիւնը, նշանակութեան եւ ամեն գոհունակութեան արժանի

է երկրագործական տնօրէնութեան վիութաջանութիւնը եւ ազգութիւնը, զորս հասկնալով՝ թող չի զլանան մեր գաւառացի երկրագործներն ինչպէս եւ արհեստաւորները մեզ գրել ինչ որ իրենց արհեստից պէտքերն կը պահանջեն, վաստակ ըլլալով՝ որ երկրագործութեան եւ արհեստից պաշտօնէութեան աչքէն չեն վրիպիր ժողովրդեան խնդիրքը, եւ ինչ որ օգտակար եւ կարելի նկատուի կը գործագրուի իոկոյն յօդուա ժողովրդեան։ Թող ջանայ ժողովարդը օգտիլ եւ յառաջադիմել՝ ալօթելով վասն կենաց մեր առատագութ Կայսեր, որ պաշտպանն է երկրագործին եւ արհեստաւորին։

Յ . Ա .

Վաեմաւուի Տէր իմ Ամասեան Էֆէնի, Ընդհանուր Տնօրին երկրագործութեան։

Ի Կ. Պոլիս

Նէզարէթէն առ կուսակալութեան ուղղեալ 22 ապրիլի հեռագիրը⁽¹⁾ ինձ հազորդուած ատեն անմիջապէս մեկնելով Պանտըրմա եկայ։

Հիւանդութենէ մեռած եւ մեռնելու վրայ եղող հաւերռու արիւնը՝ հետո բերած միջրօսիրով քննեցի եւ տեսնելով miccerocœusի աեսակէ եղող հաւկթաձեւ միքրոպները անմիջապէս հաստատուեցաւ որ այս հիւանդութիւնս cholera des poules (հաւերռու գուման) է. որ երկու երեք ամիսէ ի վեր իւր կոտորածը կը շարունակէ եղեր եւ մինչեւ այսօր 5000 հաւու չափ մեռած են. բայց այժմ հիւանդութիւնը նուազած է։

Այս տեղի հիւանդութեան պատճառ եղած են՝ Պրուսյի կուսակալութեան վերաբերեալ Միհալը եւ Քըրմասթիքագներէ վաճառականներու բերած հաւերն։ Յիշեալ քաղաքներու մէջ մինչեւ ցայսօր հիւանդութիւն կայ կասեն։

Պէտիէի միջոցաւ՝ քաղաքին մէջը գանուած աղբանոցներու մէջ նետուած մեռեալ հաւերը՝ խորունկ հոր մը փո-

(1) Տնօրինի անցեալ թուոյն մէջ յիշուած է այս հիւագիրը։ Ծ. կ

րել տալով մէջը նետել տուի վրան ալ լաւ մը կիրով գոցելով։

Ամեն թաղերու մը յարները եւ այաները կանչուելով խստիւ հրաման եղաւ՝ թաղերնուն բոլոր հաւացները լայ ծե շախով լուալ (պատանա ընել) եւ մաքրել տալու, եւ հաւերուն խմած ջուրին մէջ ասիս գինիի գնել տալու։

Հաւի վաճառականութիւնը 5-6 տարիէ ի վեր մեծ կարեւորութիւն ստացած է աստ. Պանտըրմայի նաւահանգստէն տարին 25—50000 հաւ կ. Պոլիս կը տարուի. Հարիւրաւոր անձինք գիւղերը կայցելեն եւ մեծ քանակութեամբ հաւ ծախու կառնեն, գիւղացիք սկսած են Basse-courի (հաւեղէն սնուցանելու) կարեւորութիւն տալ։

Շերամի հունտերը ամեն տեղ բացուած են, օդերը յաջող կերթան։

Բաւական օրէ ի վեր այս տեղ եմ, հաւերու հիւանդութիւնը անհետանալու վրայ է։

Մատուցանելով Ձերդ Վաեմութեան իմ խորին յարդանքներ Մնամ

միշտ երախտապարտ եւ խոնարհ ծառայ
Պահերմա, 1 մայիս 1887

Ե. Գ. Ա. Ա. Թ. Օ. Կ.

ՍՈՎԵՏԻ ՄՏԱԻՈՐԻ

ՀԱԽԱՔԵԱԼ ԲԱԶՄԱՐԴԻՒՆ ԴԱՍԱՌՈՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԹՈՎՄԱՍ ԷՖԷՆՏԻ
ԹԷՐՁԵԱՆՀ «ՏՆՏԵՍԻ» ՀԱՄԱՐ

21. Երբ որ տարակուսիս՝ ետ կեցիր։

ԶԲՈ. ԴԱ. ՇՏ

22. Շատ անգամ մեր ակնկալութեանց մէջ ինքզինքնիս խարուած կը կարծենք, որովհետեւ նախ մենք զմեզ լուած ենք։

ՅԵԼԻԲ ՍԻՑՆԵՑ

25. Մոլորութիւնք յարդի պէս երեսը կը ծփան, մարգրիտ վնասողը պէտք է սուզի մինչեւ ի խոր:

ՏՐԱՅԴԻՆ

24. Օրինակը կենդանի օրէնք մ'է, որոյ ազդեցութեան ամեն մարդ գրաւոր օրէնքներէն աւելի կը հպատակի:

ՍԻՑԼԿ

25. Ոչ թէ խորակաց քանակին՝ այլ կոչնականաց զուարթութիւնն է որ խնջոյք մը խնջոյք կ'ընէ:

1.098 ՔԼԵՐԵՆՏԸՆ

26. Զհամարձակի մէկը խրատատու ըլլալ այլոց՝ եթէ նախ զիւր անձն խրատած չէ:

ՍԵՆԵԿԱ

27. Դժուարին է վայելչութեամբ ծերանալը:

ՏԻԿԻՆ ՏԸ ՍԹԱԼ.

28. Զօրութեամբ ընկճողը՝ կիսով չափ միայն ընկճեց իւր թշնամին:

ՄԻԼԹԸՆ

29. Բնութիւնը երբեմն խենդ չինած է, բայց իմաստակը մարդկային ձեռակերտ է:

ԷՑԻՍԸՆ

30. Աղէկ գիրք մը եւ աղէկ կին մը պատուական են յոյժ՝ անսնց արժանիքը գնահատել գիտցողին համար. եւ սակայն կան մարդիկ որ այդ երկուքն ալ իրենց ծածկոյթէն միայն կը դատեն:

Ք.

32 Ամեն իմաստութիւն յայսմ կը կայանայ. չգիտցածը գիտնալ չկարծել:

ՀՈՒՆԿԱՎՈՒ

32 «Երբ որ մեծնամ», այս է առայութեան բանաստեղծութիւնը. «Երբ որ պզտիկ էի», այս է ծերութեան բանաստեղծութիւնը:

ՑԱԱՄՄԱՐԻՕՆ

35. Զայրոյթը զսպելու համար վարժուէ խօսիլ առանց ձայնդ այլայլելու:

ԲՈԼԵՄՈ

54. Թերութիւն սիրոյ կամ թերութիւն դրամոյ՝ ահա
ինչ որ կը գտնես մեր ամեն ցաւոց խորը.

ՊԻՔԸՆՍՅԻԼՏ

55. Զկայ դիւրին բան մը որ չդժուարանայ ակամայ
գործուելով:

ՏԵՐԵՆՏԻՈՍ

56. Աշխոյդ եւ նրբամտութիւն մարդս ընկերութեան մէջ
կը փայլեցնեն, բայց ռատիկ զբոսանք եւ բարձրաձայն քրքիչ
զինքը խեղատակի կը փոխեն:

ԶԼԱՑՔԸՆԾԻԼՏ

57. Հանդերձը բարոյականի կրկնակի օրէնքը կը բովան-
դակէ՝ սոսկական եւ հասարակաց, այլոց համար կը պարտինք
ուշադրութիւն, մեզ համար մաքրութիւն:

ԼԻԴԴԻՆ

58. Ամենէն ստոցդ ճամբան ինքզինք վշտերէն զերծ պա-
հելու՝ մեր սրտին մէջ առանձնանալ եւ մեր երջանկութեան
բաւելն է:

ՃԵՖԵՐՍԸՆԾԻԼՏ

59. Տարիներով միայն չժուագրիր կեանք. պատահարք
երբեմն լաւագոյն տումարներն են:

ՊԻՔԸՆՍՅԻԼՏ

40. Բարոյական նկարագիր մը կայ աշնանային տեսարա-
նաց վրայ. տերեւք կը թափին մեր տարիքներուն պէս, ծաղ-
կունք կը թոռմին մեր ժամերուն պէս, ամպերը խոյս կու-
տան մեր ցնորից պէս, լոյսը կը նուազի մեր մոտաց պէս, տ-
րեւը կը պազի մեր զգացմանց պէս, գիրք կը կանին մեր կե-
նաց պէս, ամեն բան վերջապէս մեր ճակատագրին հետ խոր-
հըրդաւոր տռնչութիւններ ունին:

Ք.

ՊԱՐԱՊՈՅ ԺՎԱՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Պուլվը ըսած է թէ մահը շատ անգամ ատելութիւնը
սիրոյ կը փոխէ: Նայնպէս ալ կ'ըսէ թիստիթ, մենք կրնանք
խոզերու հակակրութիւն ունենալ, բայց եւ այնպէս կը սի-
րենք խոզի ապուխտն ու երիշիկը (բաստըրմա եւ սուճուգ):

«Տունը լինչ է առանց մօր մը» ըստ ծերունի տիկինը։
«զուարձալի տեղ մը» սպատասխաննեց թունիկը, «երբ մայրը
դաշաճ առեն անուշեղինաց պահարանի բանալին հոն մոռնայ»։

Ամուսինը բարկացած։ — Կարծեմ ալ չափը անցաւ, դու
չի խոսացա՞ր ինձ, որ գերձակին պիտի գրես հագուստը ետ
ձգելու համար։

Ճեզ և սիրուն կինը։ — Նոյն օրը գրեցի իսկայն։

Ո՞վ կը խաքես կոր, ահա հագուստը՝ հաշիւն ալ ի միա-
սին, որ բաւական է մարդ սնանկացնելու։

Նամակը քեզ յանձնեցի գերձակին զրկելու համար, վախ-
նամ որ մսոցար դարձեալ։

Բաել է՝ «դու ալ ոօման կարդալու միրահար ես» ըստ
ոօման գրող հեղինակ մը, երբ կառք նստած առեն տեսու
որ կառավարը ահագին հատոր մը իր քովը կը դնէր։

Այս պարոն, չառ ոօմաններ կարդացած եմ եւ զզուած
եմ տեսնելով որ ատոնց հեղինակները կենաց առօրեայ գոր-
ծառնութեանց անգամ հմառւթիւն չունին։ Օրինակի համար
ահա պատմութիւն մը որ կարդացի։ «Իշխանը յուզուեցաւ
այդ խօսքը լսելով, անմիջապէս կառք մը կանչեց, մէջը ցատ-
կեց եւ քսակը կառավարին նետելով գոչեց, քաշէ Սէնթօ-
նօրէ արուարձանը»։ Եետոյ քանի մը տող անդին դարձեալ
գրուած է՝ «Վալէնթին որոշեց միանգամ ընդմիշա գաղտնիքը
լուծել, եւ հրապարակ վազելով ցատկեց դէմն ելած առաջին
կառքին մէջ, եւ գրանակը կառավարին նետելով ըստ։
շնորհ, սա կառքին ետեւէն գնա»։ ահա պարոն, ես քա-
ռասուն տարի է Բարիզի մէջ կառք կը վարեմ եւ հազարնե-
րով ամեն ենսակ անձինք տարած եմ ամեն երեւակայելի
պարագաներու մէջ՝ ինչպէս եռանդուն սիրահարներ, նա-
խանձու ավելիններ, վախչող գանձապեաններ եւ այլն, եւ
երբեք իմ բազմամեայ փորձառութեանս միջոցին պատահած
չեմ մարդ մը կամ կին մը, որ իր քսակը ինձ նետէր։ Ոչ
սլարոն, միշտ ինձ Յօն սու տուած են, իմաստ քիչ անգամ կը որ
հաշիւ երկու փրանք առած եմ։

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԱ

Երբ առաջին անգամ Տնտեսն հրատարակելու ձեռնարկեցինք, որոշած էինք 16 երեսէ բազկացեալ թերթ մը հանել իր համեստ գնոյն՝ տարեկան 10 զրուցի փոխարէն. մեր նպատակը ոչ թէ նիւթական շահու մը ակնկալութիւն այլ սոսկապէս ժողովրդեան ծառայութիւն մ'ընել ըլլալով՝ ինչպէս հրատարակուած թիւերէն յայտնի է, ամեն անգամուն ալ 16 երեսէ աւելի թերթ մը տուած ենք ժողովրդեան. Ասկից ետքն ալ չպիտի խնայենք կարելի եղած զոհողութիւններն ընել թերթը ամեն կերպով ժողովրդեան օգտակար ընելու համար, միայն թէ ամեն ընթերցող վերահասու ըլլալով մեր ջանից եւ զոհողութեանց, ինքն ալ իր կողմանէ մեզ աջակցի Տնտեսի յառաջադիմութեանը եւ տարածմանը համար, վստահ ըլլալով թէ որչափ մեր թերթին տարածումը աւելնայ, այնչափ աւելի նա պիտի ծառայէ իւր ընթերցողաց օգտին. ուստի

Հ Ն Թ Ե Ր Ց Ո՛Ղ Ք

Տնտեսն յանձնարարեցէք Զեր բարեկամաց.
Թերթին աժան է և օգտակար ամեն ընտանեաց.

Բաժանորդագին

Վեցամսեայ ՀԻՆԳ զրուշ միայն.

Յետ այսորիկ Տնտեսի վերաբերեալ ամեն դրութիւնք պէտք է ուղղուին հետեւեալ հասցէին,

Ա.Ա.

Տնօրինութիւն Տնտես ամսագրի
Քիւրէկնիլէր, Զիվէր-Պէլ-խան, թիւ 14, Պալարիա

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻ, 10

Administration de la Revue «DENDESS»

Zivér Bey-Han, N. 14. Galata.

CONSTANTINOPLE